

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Ս. Զատկի հրաշափոռ առնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ Եկեղեցւոյ Սրբազն Պետերուն յղուած են հետեւալ չնորհաւորական հռատիքիրները. —

Երուսաղէմ, 3 Ապրիլ 1983

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Ս. Զատկի հրաշափոռ առնին բարերաստիկ առիթով, խոնորհաւոր կը ներկայացնենք Զերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբիանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, ինդրելով Բարձրիալն Ասոււծմէ որ շնորհէ Զեղ յաջողութիւններով լի երկար և առաջ կետնք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածինին առանանութիւն և բարգաւաճում:

ԵՂԻՇԽ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԵՐԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 3 Ապրիլ 1983

Նորին Սրբութիւն

Յովիաննէս - Պողոս Բ. Պատ

Վատիկան

Ս. Զատկի հրաշափոռ առնին բարերաստիկ առիթով, յարգանք կը ներկայացնենք Զերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Զեղ շարունական առաջութիւն և Զեր մեծ Եկեղեցին՝ բարգաւաճում: Թող Ամենասկարողն Աստուած յաջողութեամբ պատկէ Զեր բարի լանգերն ու ծրագիրները:

ԵՂԻՇԽ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԵՐԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 3 Ապրիլ 1983

Ն. Ամենապատոււթիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկով

Ս. Զատկի հրաշափոռ առնին առիթով, կը ներկայացնենք Զեղ մեր Եղբայրական և Զերծ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթեանքներով Զերդ Սրբութեան առաջութեան և բարգաւաճ գործունեութեան համար:

ԵՂԻՇԽ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԵՐԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

## ՎՐՈՂԱԿԱՆ

### ԳԵՐԱԶԱՆՑ ՅՈՐԵԼԵԱՆԸ

(Քրիստոսի Խոշելուքեան և Բարուքեան  
1950 ամեակին տոիրով)

Անյիշատակ ժամանակներէ ի զիր,  
աղգեր, ժաղվուրդներ և ժարդարյին  
որոշ խմբաւորումներ ջանացած են իրենց  
ծոցէն ծնած մեծ ժարդերու կամ իրենց  
կեանքին վրայ վճառական ազդեցութիւն  
ունեցող գէպֆերու յիշատակը տահնը մէկ  
աղեկնչէլ յօբելսաններով (\*), ծարելզարձէն  
սկսեալ մինչեւ դուրազարձերը, այդ Յառ  
եկեաններուն նպատակը եղած է զիր  
առնել գերը քաղաքակրթութեան կամ  
արուեստներու պատմութեան վրայ իրանց  
կիրք դրոշմած հանճարներուն ու ներսու-  
ներուն, անոնց յիշատակին յարդանքի  
արժանի տուրքը ժամանցանելէ Շանդին,  
ներկայ ու նորուհաս սերւնդներն ալ ու-

(\*) Յարեան (Jubilee) հրեական ժամանակ քաղմիմաստ բառ մըն է. որ քառ տար Հայ-  
կացեան Բարդիրքին, կը նշանակիք ազատո-  
րին բռութիւն, արձակում. Սակայն բառ Թա-  
մանափ, ասոր բառ հմատուն է 50 տարիներու  
շրջան մը, ինչպէս որ 3-0 տարիներու ապրով  
նոյ նաևապետի համար բռուած է թէ ապրած  
է տօթը Յաքելաններու:

գեարելու անոնց օրինակով, օգտակարին  
ու բարձրին ձգտելու գերազնիւ զգացում.  
Ներու հրանքումավը, արծարծումավը մար-  
դերէն ներս, իսկ գէպֆերու յորելինական  
յիշատակութիւններ կը միտին լուսար-  
ձակի տակ առնել անոնցմէ քաղաքած շա-  
հերն ու բարիքները և նոյն տաեն փառ-  
երգի այդ շարժումներուն ետին կեցող  
մեծ անձնաւորութիւնները.

Սակայն աշխարհի ստեղծագործութե-  
ան ի զիր, քաղմահազար տարիներու ընտ  
թացքին պատահած անհաջուելի այդ մմեծ  
Դևագերէն գերազանցն էր անտարակոյս  
ինչ որ կատարուեցաւ հոս, Ս. Երկրին  
մէջ, առէ ճիշդ 19 ու կէս գարեր տուաջ(\*):  
Ճիշդ տասոր համար է որ Քրիստոնէա-  
կան նկաղեցոյ մեծագոյն հատուածի Պետր  
— Հոգվայ Քահանայապեան Ն. Արքու-  
թիւն Յովհաննէսու Պօղոս Բ. Պատը — 6

(\*) Ետաերէ նկանուած տեսակէտ մըն է  
— աստղաբաշխական հաշիւններու յինած —  
մէ մեր Տիրոջ նեռանոցը չըսր տարիներով կը  
կանիւ մեզի անօթ Քրիստոնէական Թուա-  
կանի սկզբնաւորութիւնը. Ճիշդ հակառակին  
է ասկայն որ մենք կը հանդիպվնք մայացա-  
ւորքում մէկ, որ նիկիոս Ս. Ժողովի մասին  
խօսած ատեն կ'ըսուի թէ այդ ժողովը (որուն  
գումարման թուականը անառաքեիթորէն ըն-  
դունուած է բաւար Քրիստոնեայ նկաղեցինե-  
րու կոզմէ իրրի. 325) տեղի ունեցած է 288  
տարիներ յօթ Համբարձման Քրիստոսի Այր-  
ևաշիւսի, մեր Տիրը ծնած է Յ. թ. 4 թուակա-  
նին և խաչուած ու համբարձած՝ 37ին:

#### Ամեն. Յ. Եղիշէ Արքեպո. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց - Երուսաղէմ

Զերք Մմենապատուութիւն,

Եղայրական սիրոյ և նոգեւոր ուրախութեան զգացումներով է որ սրտագինս կ'ողջուններ Ձեզ Քրիստոսի Ս. Յարութեան մեծ տօնին առիթով:

Այս սուրբ օրուան մէջ, որ մեր Տիրն ու Փրկիչը մահուան ու խաւարին վրայ տարած իր փառաւոր յաղթանակով անմահութեան լուսաւոր մամրան բացաւ մեր առջեւ, Ձեզ կը մաղթինք քաջառողջութիւն, յաջողութեամբ տանելու համար Զեզի վստահուած բարձր ու պատասխանատու պաշտօնը:

Թող Տէրը իր մեզի ծգած խաղաղութեան խոստումին համածայն զնորհէ մեր բոլորին երջանիկ օրեր ու տարիներ, ի փառս ամենասուրբ իր անուան:

Եղայրական միրով ի Քրիստոս՝

Գ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի և Համայն Ռուսիոյ